ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2024 թվականի N 1991 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 842-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1562-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 1065-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 842-Լ որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման վերնագրի, 1-ին կետի, 2-րդ կետի 1-ին ենթակետի, հավելվածի վերնագրի, հավելվածի 1-ին, 2-րդ կետերի, 3-րդ կետի 1-ին նախադասության և 4-րդ ենթակետի, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ և 23-րդ կետերի «սահմանամերձ» բառից հետո լրացնել «և առանձին» բառերով.

2) հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը «գ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» և «ե» պարբերություններով.

«դ. առանձին բնակավայրերի դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 13 տարին չլրացած երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ, որոնք ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում հաշվառված չեն եղել Երևան քաղաքում,

ե. առանձին բնակավայրերի դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 13 տարին չլրացած երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ, որոնցից առնվազն մեկն ուսուցչի պահանջները բավարարող անձ է.».

3) հավելվածի 3-րդ կետը 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) **առանձին բնակավայր**՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գոմք բնակավայր։».

4) հավելվածի 11.2-րդ կետը «շահառուները» բառից հետո լրացնել «(ամուսիններից առնվազն մեկը)» բառերով.

5) հավելվածի 24-րդ կետում «2000» թիվը փոխարինել «2400» թվով։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025 թվականների ծրագրի իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1562-Լ որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման վերնագրի, որոշման 1-ին, 2-րդ, 4-րդ կետերի, N 1 հավելվածի վերնագրի, N 1 հավելվածի 1-ին կետի, 2-րդ կետի 1-ին ենթակետի, N 2 հավելվածի

վերնագրի, N 2 հավելվածի 1-ին կետի, 2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի, N 1 ձևի վերնագրի «սահմանամերձ» բառից հետո լրացնել «և առանձին» բառերով.

2) N 1 հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետը և N 2 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը «գյուղական» բառից հետո լրացնել «և առանձին» բառերով.

3) N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի և N 2 հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» և «ե» պարբերություններով.

«դ. առանձին բնակավայրերի դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 13 տարին չլրացած երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ, որոնք ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում հաշվառված չեն եղել Երևան քաղաքում,

ե. առանձին բնակավայրերի դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 13 տարին չլրացած երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ, որոնցից առնվազն մեկն ուսուցչի պահանջները բավարարող անձ է.».

4) N 1 հավելվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ ենթակետով.

«10) **առանձին բնակավայր**՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գոմք բնակավայր։».

5) N 1 հավելվածի 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով.

«3.1. Ուսուցչի պահանջները բավարարող պոտենցիալ շահառուները ծրագրում ընդգրկվելու համար դիմում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)՝ ներկայացնելով քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինների անձը հաստատող փաստաթղթերը, ամուսնության վկայականը, երեխայի (երեխաների) ծննդյան

վկայականը, ուսուցչի պահանջները բավարարելու վերաբերյալ փաստաթուղթը: Ստացված տեղեկատվության հիման վրա նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ստանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հաստատումը շահառուի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով տվյալ բնակավայրում պոտենցիալ շահառուի մասնագիտական պահանջարկը: Հաստատումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ծրագրի պայմաններին և պահանջներին համապատասխանողներին շնորհվում է շահառուի կարգավիճակ: Կարգավիճակ ստացած շահառուները դիմում են գործընկեր կազմակերպություն հիփոթեքային վարկավորման համար:».

6) N 2 հավելվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ ենթակետով.

«8) **առանձին բնակավայր**՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գոմք բնակավայր:»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1562-Լ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1065-Լ որոշման 4-րդ կետը «վերանորոգման վարկի» բառերից հետո լրացնել «կամ կառուցապատման վարկի հերթական փուլի» բառերով:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված փոփոխությունը՝ շահառուների թվի հավելումը, տարածվում է բացառապես՝

1) 2024 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ շինարարության թույլտվություն ստացած շահառուների վրա.

2) Տավուշի մարզի Բաղանիս, Բերքաբեր, Կիրանց, Ոսկեպար և Վայոց ձորի մարզի Գոմք բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) նպատակով դիմած շահառուների վրա: Ընդ որում,

Ոսկեպար և Բաղանիս բնակավայրերից յուրաքանչյուրում նախատեսվում է աջակցություն տրամադրել մինչև 50 շահառուի, Բերքաբեր և Կիրանց բնակավայրերից յուրաքանչյուրում՝ մինչև 40 շահառուի, Գոմք բնակավայրում՝ մինչև 30 շահառուի, որից 5-ը բացառապես ուսուցչի պահանջները բավարարող շահառուների համար։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ